

Կայացավ մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը Թալինի տարաշաշրջանի բնակիչների համար

Դեկտեմբերի 11-ին մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Թալինի քաղաքապետարան եւ քաղաքացիների ընդունելություն կատարեց Թալինի տարածաշջանի բնակիչների համար:

Համայնքների ղեկավարների կողմից եւ իրազեկման այլ միջոցներով բնակիչները նախօրոք տեղեկացել էին ընդունելության կազմակերպման մասին: Ընդունելությանը մասնակցեց 40 քաղաքացի: Նրանցից 2-ը մարզպետին դիմեց աշխատանքի, 2-ը՝ բուժօգնության, 1-ը՝ բնակարանի հարցերով: Դիմումատուները խնդիրների կարգավորման վելաբերյալ ստացան հստակ պատասխաններ եւ պարզաբանումներ: 36 քաղաքացի՝ համաձայն ներկայացրած դիմումի, ստացավ դրամական աջակցություն:

Թալին այցելության ժամանակ մարզպետը հանդիպես նաեւ վետերանների միության անդամներին եւ նրանց նվիրեց հեռուստացույց: